

**Արագ ուղեցույց
to Medicare-ի և
Medicaid-
ի համար**



Medicare

Ինչ է Medicare-ը.

Medicare-ն առողջության ապահովագրության ծրագիր է՝

- 65 տարեկան կամ ավելի բարձր տարիքի անձանց համար,
- Հաշմանդամության որոշ տեսակներ ունեցող մինչև 65 տարեկան անձանց համար,
- Սուր երիկամային անբավարարությամբ (հեմոդիալիզի կամ երիկամի պատվաստում պահանջող երիկամի քրոնիկ անբավարարություն) կամ Կողմնային ամիոտրոֆիկ սկլերոզով (ԿԱՍ, կոչվում է նաև Լու Գերիզի հիվանդություն) տառապող ցանկացած տարիքի անձանց համար:

Որո՞նք են Medicare-ի բաղադրիչները:

Original Medicare-ը ներառում է Medicare Մաս A-ն (Հիվանդանոցային ապահովագրություն) և Մաս B-ն (Բժշկական ապահովագրություն): Medicare Advantage ծրագիրը Ձեր Medicare Մաս A և Մաս B ապահովագրական ծածկույթը ստանալու մեկ այլ եղանակ է: Medicare Advantage ծրագրերը, որոնք երբեմն անվանում են «Մաս C» կամ «MA ծրագրեր», առաջարկվում են Medicare-ի կողմից հաստատված մասնավոր ընկերությունների կողմից, որոնք պետք է հետևեն Medicare-ի կողմից սահմանված կանոններին:

Medicare Մաս A-ն օգնում է հատուցել.

- Հիվանդանոցներում ստացիոնար բուժում,
- Որակավորված բուժքույրական հաստատություններում խնամք,
- ռսպիսային խնամք,
- Տնային պայմաններում մատուցվող առողջապահական ծառայություններ,

Medicare Մաս B-ն օգնում է հատուցել.

- Բժիշկների և առողջապահական խնամքի այլ ծառայություններ մատուցողների ծառայություններ,
- Ամբուլատոր ծառայություններ,
- Տնային պայմաններում մատուցվող առողջապահական ծառայություններ,
- Երկարաժամկետ օգտագործման բժշկական սարքավորումներ (ինչպիսիք են անվասայլակները, քայլակները, հիվանդանոցային մահճակալները և այլ սարքավորումները)
- Շատ կանխարգելիչ ծառայություններ (օրինակ՝ սքրինինգներ, պատվաստումներ և տարեկան «Առողջության» այցեր)

Medicare Մաս D-ն (դեղորայքի ապահովագրական ծածկույթ) օգնում է.

- Ծածկել դեղատոմսով դուրս գրվող դեղերի ծախսերը (ներառյալ առաջարկվող շատ պատվաստումներ):
- Ձեր դեղորայքային ծախսերին, որոնք չեն փոխհատուցվում Մաս B-ով

Դուք կարող եք միանալ Medicare-ի դեղորայքային ծրագրին, ի լրումն Original Medicare-ի, կամ այն ստանում եք՝ միանալով դեղորայքի ծածկույթով Medicare Advantage ծրագրին: Medicare դեղորայքի ծածկույթով ծրագրերը վարում են մասնավոր ապահովահրական ընկերությունները, որոնք հետևում են Medicare-ի կողմից սահմանված կանոններին:.



Ձեր Medicare տարբերակները

Երբ առաջին անգամ ստանաք Medicare, տարվա ընթացքում որոշակի ժամանակահատվածներում դուք կարող եք ընտրել ձեր Medicare-ի ծածկույթը ստանալու եղանակը: Գոյություն ունի Medicare ստանալու 2 հիմնական եղանակ՝

Original Medicare

- Original Medicare-ը ներառում է Medicare Մաս A-ն (Հիվանդանոցային ապահովագրություն) և Մաս B-ն (Բժշկական ապահովագրություն):
- Դուք կարող եք միանալ Medicare-ի առանձին դեղարայքային ծրագրին՝ Medicare-ի դեղորայքի ծածկույթ ստանալու համար (Մաս D):
- Դուք կարող եք ԱՄՆ ցանկացած վայրում օգտվել ցանկացած բժշկի կամ հիվանդանոցի ծառայություններից, որն ընդունում է Medicare:
- Original Medicare-ում Ձեր գրպանից կատարվող ծախսերը վճարելու համար (օրինակ՝ Ձեր 20% համաապահովագրությունը), կարող եք նաև գնել լրացուցիչ ապահովագրություն:

Մաս A 

Մաս B 

Դուք կարող եք ավելացնել.

Մաս D 

Դուք կարող եք նաև ավելացնել՝

Հավելյալ ապահովագրություն

Սա ներառում է Medicare Supplement ապահովագրությունը (Medigap): Կամ Դուք կարող եք օգտագործել ապահովագրական ծածկույթ նախկին գործատուից կամ միությունից կամ Medicaid-ից:

Medicare Advantage

- Medicare Advantage-ը մասնավոր ընկերության ծրագիր է, որը հաստատված է Medicare-ի կողմից և առաջարկում է Original Medicare-ի այլընտրանք Ձեր առողջության և դեղորայքի ծածկույթի համար: Այս «փաթեթային» ծրագրերը ներառում են Մաս A, Մաս B և սովորաբար Մաս D:
- Շատ դեպքերում կարող եք օգտվել միայն այն բժիշկների ծառայություններից, որոնք ծրագրի ցանցում ընդգրկված են:
- Շատ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել հաստատում ստանալ Ձեր ծրագրից, նախքան այն կփոխհատուցի որոշակի դեղեր կամ ծառայություններ:
- Ծրագրերի ծախսերը կարող են տարբերվել Original Medicare ծրագրի ծախսերից: Դուք կարող եք նաև հավելյալ ապահովագրավճար ունենալ:
- Ծրագրերը կարող են առաջարկել որոշ լրացուցիչ նպաստներ, որոնք Original Medicare-ը չի փոխհատուցում, օրինակ՝ տեսողության, լսողության և ատամների հետ կապված որոշակի ծառայություններ:

Մաս A 

Մաս B 

Ծրագրերի մեծ մասը ներառում է՝

Մաս D 

Որոշ հավելյալ նպաստներ 

Ինչ է Medicaid-ը:

Medicaid-ը դաշնային և նահանգային համատեղ ծրագիր է, որը բժշկական ծախսերի մասով օգնություն է տրամադրում սահմանափակ եկամուտ և միջոցներ ունեցող որոշակի մարդկանց:

Medicaid-ը նաև առաջարկում է նպաստներ, որոնք սովորաբար չեն փոխհատուցվում Medicare-ի կողմից, ինչպես օրինակ՝ ծերանոցային խնամքի և անձնական խնամքի ծառայությունները: Կանոնները, թե ովքեր են իրավասու Medicaid-ին, տարբեր են յուրաքանչյուր նահանգում: Եթե Դուք Ձեր նահանգում որակավորվում եք Medicaid-ից օգտվելու համար, ավտոմատ կերպով իրավասու կլինեք նաև Լրացուցիչ աջակցության (Extra Help) համար: Լրացուցիչ աջակցությունը ծրագիր է, որն օգնում է սահմանափակ եկամուտ և ռեսուրսներ ունեցող մարդկանց վճարել Medicare-ի դեղորայքի ծածկույթի՝ (Մաս Դ) իրենց գրպանից վճարվող ծախսերը:

Ինչպես կարող եմ որակավորվել Medicaid-ի համար:

Ձեր նահանգում Medicaid-ին մասնակցելու իրավասություն ունենալու համար Դուք պետք է լինեք այդ նահանգի բնակիչ: Յուրաքանչյուր նահան ունի Medicaid-ից օգտվելու իրավասության և դրա համար դիմելու տարբեր կանոններ: Ընդհանուր առմամբ, Դուք պետք է համապատասխանեք Ձեր եկամուտներին և ռեսուրսներին վերաբերող Ձեր նահանգի կանոններին:

Դուք կարող եք պայմանական լինել Medicaid-ի համար, եթե սահմանափակ եկամուտ ունեք և՝

- 65 տարեկան կամ ավելի բարձր տարիքի անձ եք
- Մինչև 19 տարեկան երեխա եք
- Հղի եք
- Ունեք հաշմանդամություն,
- Երեխայի խնամող ծնող կամ չափահաս եք,
- Ձեր խնամքի տակ գտնվող երեխաներ չունեցող չափահաս եք (որոշ նահանգներում)

Դուք կարող եք ստանալ Medicaid, եթե բավարարեք Ձեր նահանգի ռեսուրսների սահմանաչափը, բայց Ձեր եկամուտը չափազանց բարձր լինի որակավորման համար: Որոշ նահանգներ թույլ են տալիս «նվազեցնել» Ձեր եկամտի չափը, որը գերազանցում է նահանգի Medicaid-ի սահմանաչափը: Դուք դա անում եք՝ վճարելով չփոխհատուցվող բժշկական ծախսերը և կիսելով ծախսը (օրինակ՝ Medicare-ի ապահովագրվածները և չհատուցվող գումարները), մինչև Ձեր եկամուտն իջնի այն մակարդակի, որով Դուք կորակավորվեք Medicaid-ի համար:

Սահմանափակ ռեսուրսներ ունեցող մարդկանց աջակցության վերաբերյալ լրացուցիչ մանրամասներ ստանալու համար զանգահարեք Ձեր նահանգային բժշկական օգնության (Medicaid) գրասենյակ կամ այցելեք [Medicaid.gov/about-us/beneficiary-resources/index.html#statement](https://www.Medicaid.gov/about-us/beneficiary-resources/index.html#statement)՝ Ձեր նահանգի կոնտակտային տվյալների համար:

Կարող եմ ունենալ և՛ Medicare, և՛ Medicaid:

Այո, հնարավոր է ունենալ և՛ Medicare, և՛ Medicaid, եթե Դուք իրավասու եք դրանց: Մարդիկ, ովքեր ունեն և՛ Medicare, և՛ ամբողջական Medicaid ապահովագրություն, «երկակի իրավասու են»: Medicare-ը վճարում է առաջինը, երբ Դուք կրկնակի իրավասու եք և ստանում եք Medicare-ի կողմից ապահովագրված ծառայություններ: Medicaid-ը վճարում է վերջինը՝ Medicare-ից և Ձեր ունեցած ցանկացած այլ բժշկական ապահովագրությունից հետո:

Եթե Դուք կրկնակի իրավասու եք, Medicare-ը փոխհատուցում է դեղատոմսով դուրս գրվող Ձեր դեղերը: Դուք ավտոմատ կերպով կգրանցվեք Medicare-ի դեղորայքային ծրագրում, որը Medicaid-ի փոխարեն կփոխհատուցի Ձեր դեղորայքային ծախսերը: Medicaid-ն այնուամենայնիվ կարող է հատուցել որոշակի այնպիսի դեղեր, որոնց համար Medicare-ը չի վճարում:

Լրացուցիչ տեղեկությունների համար, թե ինչպես են Medicare-ը և Medicaid-ի ամբողջական ապահովագրությունը գործում միասին, այցելեք՝ [Medicare.gov/basics/costs/help/Medicaid](https://www.Medicare.gov/basics/costs/help/Medicaid).



Որտեղից կարող եմ հավելյալ տեղեկություններ ստանալ:

Գտեք ընդհանուր տեղեկատվություն Medicare-ի մասին՝

- Այցելեք [Medicare.gov](https://www.Medicare.gov) Ձեր տարածքում Medicare առողջապահական և դեղարարքային ծրագրերի մասին իմանալու, մասնակից առողջապահական խնամք տրամադրողներին և մատակարարներին գտնելու, ինսամքի մասին բարձրորակ տեղեկություններ ստանալու և այլնի համար:
- Կարդացեք Ձեր ամենավերջին «Medicare-ը և Դուք» ձեռնարկը՝ իմանալու նորությունները, Ձեր կողմից կատարվող Medicare ծախսերը և տեղեկություններ ստանալու, թե ինչն է ծածկում Medicare-ը:

Ստացեք անհատական օգնություն՝

- Խոսեք կամ կենդանի չափով կապվեք իրական անձի հետ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (բացի որոշ դաշնային տոների):
 1. Չանգահարեք մեզ 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով: TTY-ից օգտվողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով: Եթե Ձեզ օգնություն է անհրաժեշտ անգլերենից կամ իսպաներենից բացի մեկ այլ լեզվով, ասեք «Agent» («Գործակալ») բառը հաճախորդների սպասարկման ներկայացուցչի հետ խոսելու համար:
 2. Մեզ հետ կենդանի չափի միացեք հետևյալ հղմամբ՝ [Medicare.gov/talk-to-someone](https://www.Medicare.gov/talk-to-someone):

- Կապվեք Ձեր տեղական Բժշկական ապահովագրության օգնության նահանգային ծրագրի (SHIP) հետ՝ Medicare-ի ծածկույթի, հայցերի, բողոքների և սահմանափակ եկամուտ և ռեսուրսներ ունեցող մարդկանց համար օգնության վերաբերյալ անհատական խորհրդատվություն ստանալու համար: Այցելեք [shiphelp.org](https://www.shiphelp.org) կամ զանգահարեք 1-800-MEDICARE՝ Ձեր տեղական SHIP-ի հեռախոսահամարն իմանալու համար:
- Այցելեք Eldercare Locator (Տարեցների խնամքի ծառայության տեղակայում)՝ [eldercare.acl.gov](https://www.eldercare.acl.gov) կայքում տեղական տեղեկատվական աղբյուրները գտնելու, արտոնությունները պարզելու և երկարաժամկետ խնամք պլանավորելու համար:
- Այցելեք [Medicare.gov/basics/costs/help/medicaid](https://www.Medicare.gov/basics/costs/help/medicaid), Medicaid-ի մասին հավելյալ տեղեկատվություն ստանալու համար:





Medicare

Դուք իրավունք ունեք Medicare-ի մասին տեղեկատվություն ստանալ մատչելի ձևաչափով, օրինակ՝ խոշոր տպագիր, բրայլյան կամ աուդիո ձևաչափով: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե կարծում եք, որ Ձեր նկատմամբ խտրականություն է դրսևորվել: Այցելեք [Medicare.gov/about-us/accessibility-nondiscrimination-notice](https://www.medicare.gov/about-us/accessibility-nondiscrimination-notice) կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: TTY-ից օգտվողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

This product was produced at U.S. taxpayer expense.